

Եփեսացիս 4:11-13 (Ephesians 4:11-13)

«Նորոգուելու Միչոց»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 09.15.02

Կարդանք Եփեսացիս 4:11-13. Այս օրը կը կոչենք վերանորոգման Կիրակի - կարելոր է գիտնալ եւ յիշել թէ Աստուած իր գործը մեզմով կուզէ կատարել:

Եփեսացիս 4:11 Պօղոս առաքեալ կը գրէ *«Աստուած մէկ քանի մտուաւ առաքեալներ ըլլալու, մէկ քանի մարգարէներ, մէկ քանի մաւետարանիչներ, մէկ քանի հովիւներ ու վարդապետներ:»*

Ասոնք աչքարու անձիք են Եկեղեցւոյ մէջ: Բայց երբ նայինք նոյն գլխուն առաջին համարներուն, հոն կը տեսնենք թէ ամէնուս համար գործ կայ: Երբ կ'ընդունինք Յիսուս Քրիստոս որպէս մեր Փրկիչը, Աստուած ամէն մէկուս կ'ուտայ պաշտօն մը որ կրնանք իրեն ծառայել: Ուրեմն երբ միասին Աստուծոյ ծառայենք, Ան մեր մէջ կը ներգործէ եւ իր կամքը կը կատարէ մեզմով:

12րդ համարը կ'ըսէ *«Սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօնին գործին համար, Քրիստոսի մարմինին շինութեանը համար:»* Տէրը մեզ կ'օժտէ ու կըսպարազինէ որ իրեն ծառայենք:

Երբ Յիսուս սկսաւ իր գործը, կանչեց ձկնորսներ՝ Յովհաննէս եւ Յակոբոս որ իրեն հետեւին: Տէրը գիրենք գտաւ երբ իրենց ուղկանները կը նորոգէին: Մենք ալ պէտք է նորոգուինք, պատրաստուինք որպէսզի Տէրը կարենայ մեզ գործածել: (Մատթէոս 4:21,22) - Արդիօք ինչպէ՞ս կրնանք նորոգուիլ:

Օր մը Յիսուսի աշակերտները կը վիճարանէին իրարու հետ ըսելով ՝թէ ո՞վ մեծ է': Յիսուս մանուկ մը փոքր կանչեց եւ ըսաւ, *«Հշմարիտ կըսեմ ձեզի, եթէ դարձի չգամ եւ տղոց պէս չըլլամ, երկինքի թագաւորութիւնը թնալ պիտի չմտնէք:»* (Մատթէոս 18:1-4)

Դժուար դաս մը: Երբ երկայն ատեն Քրիստոնեայ ըլլալով պէտք ունինք նորոգութեան:

Եկեղեցի հանախելը դիւրին է, եւ խորհիլ թէ ամէն բան գիտենք: Կամ կըսենք, *«Այս սքանչելի պատգամ մըն է, շատեր այս պատգամին պէտք ունին:»* Եւ երբէ՛ք չըզգալ թէ Տէրը մեր սրտին կը խօսի: Տէրը կուզէ Իր Եկեղեցին նորոգել, այսինքն մեր սրտերը:

Երբայցիս 4:12 կըսէ, *«Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ եւ ամէն երկսայրի սուրբ կտրուկ, որ կը թափանցէ մինչեւ շունչը ու հոգին եւ յօղուածները ու ծուծը: Կը ֆննէ սրտին խորհուրդները ու մտածումները:»*

Ուրեմն Աստուծոյ խօսքը մեր մէջ պէտք է թափանցէ, ազդարար՛է մեզ, առաւել մեր անձը ֆննենք Աստուծոյ առջեւ, եւ տեսնենք թէ Տէրը ինչպէս կրնայ մեզ գործածել: Ահա՛ այս է հոգեկան նորոգումը:

Յիսուս կանչեց Պետրոս եւ Անդրիաս որ Իրեն հետեւին: 3 տարի աշակերտները Յիսուսի հետեւեցան, Իրմէ սորվեցան շատ դասեր: 3 տարի ետք Պետրոս որ ձկնորս էր եղաւ առաքեալ. Անդրէաս Ասիո աւետարանիչ եղաւ: Եթէ մենք ալ հետեւինք, խոնարհօրէն, վստահելով եւ տալով մեր կեանքը Յիսուսի, չենք կրնար գինուիլ գին մտայելու:

Նորոգման արդիւնքը կը տեսնենք 13րդ համարին մէջ – *«Աստուծոյ Որդին նանչնալուն միաբանութեամբը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու:»*

Երբ մեր հարաբերութիւնը կը խորանայ Յիսուսի հետ, եւ գիւն մօտէն կը նանչնանք, կրնանք նաեւ իրարու աւելի մօտենալ:

«Կատարեալ անձ ըլլալ, Քրիստոսի լման հասակին չափը ունենալ» կը նշանակէ Քրիստոսի նմանիլ: Կը սորվինք ապրիլ՝ լման Քրիստոսը ներկայացնելով, Ան կապրի Իր կեանքը մեր մէջ:

Ուրեմն մտածեմք մեր Եկեղեցին ուր ամէն մէկս խոնարհած է Աստուծոյ առջեւ. գիրար կը ֆաչալերենք աղօթելու, Աստուծոյ խօսքը կարդալու միասին խոնարհ կերպով Տիրոջ ծառայելու: Այն պաշտօնը որ Տէրը տուած է ամէն մէկուս, միաբանութեամբ ծառայեմք Աստուծոյ: Այս կերպով Տէրը կրնայ լիովին գործածել մեզ Իր դաշտին մէջ:

Աղօթք

Երկնաւոր Հայր, կը պայֆարինք մեր կամֆին եւ անձնասիրութեան հետ: Օգնէ մեզի որ քեզի յանձնուինք: Թոյլ տանք որ մեզ գործածես: Եկեղեցի մը ըրէ մեզ ուր քու կամֆդ կը կատարուի եւ անունդ կը բարձրանայ: Յիսուսի անունով կը խնդրենք. Ամէն